Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2017 թվականի աշխատանքային ծրագրով 1-ին եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի վերաբերյալ հանրությանն իրազեկելու համար նախատեսվում է տարեկան արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում (www.psrc.am) հրապարակել վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրության վերաբերյալ կազմված վերլուծական տեղեկանքը:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցման, ինչպես նաև հանձնաժողովի համար գործառնական անկախության ավելի լայն հնարավորությունների ստեղծման նպատակով նախատեսվում է մշակել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել նաև Ասիական զարգացման բանկի կողմից մշակված «Կարգավորման անկախության բարձրացում» հաշվետվության հիման վրա ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման անկախության բարձրացման նպատակով իրավական գործողությունների ծրագիրը, ինչպես նաև ԵԱՏՄ-ի մասին պայմանագրի 20-րդ հավելվածը: Փոփոխություններն ունեն հանձնաժողովի մանդատն իրագործելու կարողությունները բարելավելու նպատակ:

Հանձնաժողով ներկայացված դիմումների քննարկման մասով հանրությանն իրազեկելու նպատակով նախատեսվում է կազմել և հանձնաժողովի պաշտոնական

ինտերնետային կայքում հրապարակել հանձնաժողովում մուտքագրված դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Նախատեսվում է ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունները, ինչի շնորհիվ շահագրգիռ անձանց համար հնարավորություն է ընձեռնվում ուսումնասիրել մատակարարների կողմից սպասարկման որակի ապահովմանն ուղղված գործունեության արդյունավետությունը:

Նախատեսվում է եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, ինչն անհրաժեշտ է նշված համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու համար:

Եռամսյակային արդյունքներով ամփոփվելու են և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Նախատեսվում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտում հրապարակված տեղեկատվության թարմացում, մասնավորապես՝ ջրային ոլորտում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործառույթների, լիցենզիա ունեցող անձի հիմնական պարտավորությունների, իրականացվող սակագնային քաղաքականության և սակագների վերաբերյալ՝ համապատասխան իրավական ակտերում կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց մեկամսյա ժամկետում: